ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

20.07.2020թ. *Քաղաքացիական գործ*
ք. Երևան *թիվ ԵԿԴ/0322/02/15*

ՈՐՈՇՈՒՄ
Թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու մասին

1.Գործի դատավարական նախապատմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

«ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի (Վաճառող) և Աղվան Մկոյանի (Գնորդ) միջև 21.02.2007թ. կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի թիվ Ս-27 նախնական պայմանագիրը, որով Վաճառողը պարտավորվել է որպես սեփականություն հանձնել Գնորդին, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել «ք. Երևան, Այգեստան 6-րդ փողոց, թիվ 9 և 9, Այգեստան 12-րդ փողոց, թիվ 12, 14, 16, 16/1, 18 տների տարածքի վրա կառուցվող բազմահարկ բազմաբնակարան շենքից առանց ներքին հարդարման աշխատանքների կատարման՝

- տասներորդ հարկի ձախ թևը և տասնմեկերորդ հարկն ամբողջությամբ, ընդամենը՝ 900 քմ,
- շենքի ձախ թևում առևտրային տարածքների հարկերում՝ 1-ին հարկում 43 քմ և 2-րդ հարկում 47 քմ, …, ընդամենը 87 քմ…»:

29.06.2012թ., 21.03.2014թ. և 18.03.2014թ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (Գրավառու) և «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի (Գրավատու) միջև կնքվել են պարտապան չհանդիսացող անձանց անշարժ գույքի հաջորդող գրավի համապատասխանաբար թիվ N1C259017, թիվ N1C348724 և թիվ N1C349381 պայմանագրերը, ինչպես նաև 09.04.2013թ. կնքվել է անշարժ գույքի գրավի թիվ N1C300117 պայմանագիրը, որոնցով Գրավատուն Գրավառուի մոտ գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ ք. Երևան, Սայաթ-Նովա պող., 40 շ., թիվ 22 հասցեում գտնվող և ք. Երևան, Սայաթ-Նովա պող., 40 շ., թիվ 62 հասցեում գտնվող բնակարանները:

15.06.2011թ. «Արցախբանկ» ՓԲԸ-ի (Գրավառու) և «Լևոն Ամիրխանյան» ՍՊԸ-ի (Գրավատու/Վարկառու) միջև կնքվել է թիվ L0048Ե հիփոթեքի պայմանագիր, որով Գրավատուն Գրավառուի մոտ գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ ք. Երևան, Սայաթ-Նովա պող., 40 շ., թիվ 22 հասցեում գտնվող և ք. Երևան, Սայաթ-Նովա պող., 40 շ., թիվ 60 հասցեում գտնվող բնակարանները:

11.11.2011թ. «Էյչ-Էս-Բի-ՍԻ Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (Գրավառու) և «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի (Գրավատու) միջև կնքվել է անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ LGL 20111963 պայմանագիրը, որով Գրավատուն Գրավառուի մոտ գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ ք. Երևան, Սայաթ-Նովա պող., 40 շ.,

թիվ 82/7 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքը և 0,23522 հա ընդհանուր սեփականության հողամասից իրեն պատկանող 398/225796 բաժնեմասը, ինչպես նաև ք. Երևան, Սայաթ-Նովա պող., 40 շ., թիվ 82/4 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքը և 0,23522 հա ընդհանուր սեփականության հողամասից իրեն պատկանող 390/225796 բաժնեմասը:

14.08.2013թ. «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ-ի (Գրավառու) և «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի (Գրավատու) միջև կնքվել է անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ A1120303Գ/7 պայմանագիրը, որով Գրավատուն Գրավառուի մոտ գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ ք. Երևան, Սայաթ-Նովայի պողոտա, թիվ 40 շենք, թիվ 64 հասցում գտնվող՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակարանը:

«ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի (Վաճառող) և «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (Գրավառու/Վարկատու) և Կամո Ներսիսյանի (Գնորդ) միջև 14.10.2013թ. կնքված թիվ N G13-001596 անշարժ գույքի առուվաճառքի հիմնական և գրավի պայմանագրով Վաճառողը վաճառել է, իսկ Գնորդը որպես սեփականություն ձեռք է բերել ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շ., թիվ 63 հասցեի բնակարանը: Պայմանագրի համաձայն՝ Գնորդը նշված հասցեի բնակարանը մինչև 13.10.2028թ. գրավադրել է Գրավառուի մոտ:

Աղվան Մկոյանը 03.02.2015 թվականին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության ընդդեմ «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի՝ 21.02.2017թ. թիվ Ս-27 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու և ք. Երևան, Սայաթ-Նովա 40շ., թիվ 60 բն., թիվ 22 բն., թիվ 62 բն. հասցեներում և ք. Երևան, Սայաթ-Նովա 40շ., թիվ 82/4 տարածք և թիվ 82/7 տարածք հասցեներում գտնվող անշարժ գույքերի նկատմամբ, ինչպես նաև նույն շենքի տակ գտնվող վեց ավտոմեքենայի համար նախատեսված փակ ավտոկայանատեղի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ափինյան) 06.02.2015 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

17.06.2016թ. Աղվան Մկոյանը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել միջնորդություն՝ հայցի հստակեցման, պատասխանողներ և երրորդ անձինք ներգրավելու վերաբերյալ: Մասնավորապես՝ միջնորդությամբ հայցվորը խնդրել է՝

- գործով պատասխանողներ ներգրավել «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին, «Արդշինբանկ» ՓԲԸ-ին, Կամո Ներսիսյանին, իսկ երրորդ անձինք՝ թիվ ԵԱՔԴ/0151/04/14 սնանկության գործով «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Արման Սարգսյանին, Լևոն Ամիրխանյանին, Նոտարական պալատին՝ լիազորությունները դադարեցրած նոտարներ Էմմա Շաբոյանի և Ռոզա Սահակյանի փոխարեն, Նունե Սարգսյանին:

Հայցի հիմքի և առարկայի փոփոխությամբ հայցվորը պահանջել է՝

- «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի և «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի միջև 29.06.2012թ. կնքված պարտապան չհանդիսացող անշարժ գույքի հաջորդող գրավի թիվ N1C259017, 21.03.2014թ. կնքված պարտապան չհանդիսացող անշարժ գույքի հաջորդող գրավի թիվ N1C348724, 18.03.2014թ. կնքված պարտապան չհանդիսացող անշարժ գույքի հաջորդող գրավի թիվ N1C349381 պայմանագրերի նկատմամբ կիրառել գործարքների առոչինչ մասերի անվավերության հետևանքներ, 09.04.2013թ. կնքված անշարժ գույքի գրավի թիվ

N1C300117 պայմանագրի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենքի թիվ 22 և թիվ 62 բնակարանների նկատմամբ անվավեր գործարքների հիմքով կատարված «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի իրավունքների պետական գրանցումները վերացնել:

- «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի և «Արցախբանկ» ՓԲԸ-ի միջև 15.06.2011թ. կնքված Լ0048Ե հիփոթեքի պայմանագրի (սեղանամատյանի գրանցում 5744) նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 60 բնակարանի նկատմամբ անվավեր գործարքների հիմքով կատարված «Արցախբանկ» ՓԲԸ-ի իրավունքների պետական գրանցումները վերացնել:

- «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի և «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և Կամո Ներսիսյանի միջև 14.10.2013թ. կնքված թիվ N G13-001596 անշարժ գույքի առուվաճառքի հիմնական և գրավի պայմանագրի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 63 բնակարանի նկատմամբ անվավեր գործարքի հիմքով կատարված «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և Կամո Ներսիսյանի իրավունքների պետական գրանցումները վերացնել:

- «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի միջև 11.11.2011թ. կնքված անշարժ գույքի գրավի թիվ LGL20111963 պայմանագրի նկատմամբ կիրառել գործարքի առոչինչ մասերի անվավերության հետևանքներ, այն է՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 82/4 և 82/7 տարածքների նկատմամբ անվավեր գործարքի հիմքով կատարված «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի իրավունքների պետական գրանցումները վերացնել:

- «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի և «Արդշինբանկ» ՓԲԸ-ի միջև 14.08.2013թ. կնքված թիվ A1120303Գ/7 անշարժ գույքի գրավի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 64 բնակարանի նկատմամբ անվավեր գործարքի հիմքով կատարված «Արդշինբանկ» ՓԲԸ-ի իրավունքների պետական գրանցումները վերացնել:

- «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի և «Արցախբանկ» ՓԲԸ-ի միջև 15.06.2011թ. կնքված թիվ Լ0048 անշարժ գույքի գրավի նկատմամբ կիրառել գործարքի առոչինչ մասերի անվավերության հետևանքներ, այն է՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, -3 հարկում /-10.2 նիշ/ գտնվող թվով վեց հատ ավտոմեքենայի համար ավտոկայանատեղիի նկատմամբ անվավեր գործարքների հիմքով կատարված «Արցախբանկ» ՓԲԸ-ի իրավունքների պետական գրանցումները վերացնել:

- Աղվան Մկոյանի և «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի միջև 21.02.2007թ. թիվ Ս-27 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու հիմքով և/կամ տիրապետման փաստի հիմքով և/կամ գույքի փաստացի հանձման և դրա դիմաց գումարի վճարման, այդ իսկ հիմքով անվիճելի, օրենքով երաշխավորված ու կատարման ենթակա պահանջի իրավունքի հիման վրա ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 60 բնակարանի (փաստացի մակերեսը կազմում է 171,6 քմ), թիվ 22 բնակարանի (փաստացի մակերեսը կազմում է 196,7 քմ), թիվ 63 բնակարանի (փաստացի մակերեսը կազմում է 124,7 քմ), թիվ 62 բնակարանի (փաստացի մակերեսը կազմում է 116,4 քմ) և Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 82/4 տարածք, թիվ 82/7 տարածք հասցեներում գտնվող անշարժ գույքերի նկատմամբ, ինչպես նաև նույն շենքի տակ -3 հարկում /-10.2 նիշ/ գտնվող թվով վեց հատ ավտոմեքենայի համար ավտոկայանատեղիի նկատմամբ ճանաչել Աղվան Մկոյանի սեփականության իրավունքը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ափինյան) 07.09.2017թ. որոշմամբ

քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության վարույթում գտնվող թիվ 46101215 քրեական գործով վերջնական ակտի կայացումը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ափինյանի լիազորությունների դադարեցման հիմքով քաղաքացիական գործը 08.06.2020 թվականին հանձնվել է նույն դատարանի դատավոր Դ. Մխեյանին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Դ. Մխեյան) (այսուհետ՝ Դատարան) 10.06.2020 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և հանձնվել է ՀՀ սնանկության դատարանի քննությանը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«(...)

Համաձայն 15.04.2020թ.-ից գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր):

Տվյալ դեպքում դատարանն արձանագրում է, որ «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ն դատարանի վճռով ճանաչված է սնանկ, որի վարույթը դեռևս շարունակվում է, և սույն քաղաքացիական գործով ներկայացված են սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող պահանջներ, հետևաբար սույն քաղաքացիական գործը պետք է հանձնել Սնանկության դատարանի քննությանը և այն քննել «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի վերաբերյալ սնանկության վարույթի շրջանակներում»:

06.07.2020 թվականի թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործը մակագրվել է Սնանկության դատարանի դատավոր Ս. Թադևոսյանին:

08.07.2020 թվականի որոշմամբ Սնանկության դատարանը գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«(...) թիվ ԵԿԴ/0322/02/15 գործով սնանկության գործընթացը սկսել է մինչև 15.04.2020 թվականը, հետևաբար սույն դեպքում «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի դրույթները սույն գործով կիրառելի չեն:

(...) Նկատի ունենալով այն, որ թիվ ԵԱՔԴ/0151/04/14 սնանկության գործով ներկայացված դիմումը վարույթ է ընդունվել 30.12.2014 թվականին, գտնում եմ, որ սույն գործով կիրառելի է սնանկության գործընթացը սկսելու պահի խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները:

30.12.2014 թվականի խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է ընդհանուր իրավասության դատարաններում (այսուհետ՝ դատարան):

Վերոգրյալ իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է սնանկության գործերի առարկայական ընդդատության ընդհանուր կանոն, համաձայն որի՝ սնանկության գործերը ենթակա են քննության ընդհանուր իրավասության դատարանների կողմից: 30.12.2014 թվականի խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքում բացակայում է սնանկության գործը քննող դատավորի կողմից սնանկության վարույթին որևէ կերպ առնչվող առանձին քաղաքացիական գործեր քննելու կարգը սահմանող որևէ դրույթ: Նման իրավակարգավորում «Սնանկության մասին» օրենքում ներմուծվել է միայն «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 17.06.2016թ. ընդունված թիվ ՀՕ-105-Ն օրենքով, որի իրավակարգավորումները տարածվում են այդ օրենքի ուժի մեջ մտնելու հետո ծագած հարաբերությունների վրա, մինչդեռ սույն դեպքում թիվ ԵԱՔԴ/0151/04/14 սնանկության գործով ներկայացված դիմումը վարույթ է ընդունվել 30.12.2014 թվականին:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ սույն գործը ՀՀ սնանկության դատարանում քննության ենթակա չէ»:

Թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 13.07.2020թ.:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

Սույն գործով առաջին ատյանի դատարանների միջև քաղաքացիական գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու համար գտնում եմ, որ անհրաժեշտ է անդրադառնալ և եզրահանգումներ անել հետևյալ իրավական հարցադրումների կապակցությամբ.

1) արդյո՞ք 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության շրջանակներում հարուցված և քննվող քաղաքացիական գործերը կարող են ըստ ենթակայության հանձնվել Սնանկության դատարանին,

2) արդյո՞ք Սնանկության դատարանը մինչև Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելն իրավասու է հանձնված գործի ենթակայության վերաբերյալ անհամաձայնության հիմքով գործն ուղարկել Վճռաբեկ դատարանի նախագահին այն դեպքում, երբ փվյալ գործը հարուցվել է և քննվում է 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության շրջանակներում,

3) ինչպես մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով, այնպես էլ՝ 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված են արդյո՞ք այնպիսի հանգամանքներ, որոնց բացակայությունը՝ գործի քննությամբ պարզելուց հետո միայն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները կարող են վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին հարց քննարկել,

4) կարող են արդյո՞ք «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) կարգավորումները կիրառվել մինչ այդ օրենքի ուժի մեջ մտնելը Սնանկության դատարանի վարույթում գտնվող սնանկության գործի հետագա վարման կամ առանձին դատավարական գործողությունների կատարման գործընթացում,

5) որո՞նք էին մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված այն պահանջները, որոնց վերաբերյալ քաղաքացիական գործում փաստերի առկայությունը կարող էր միայն թույլ տալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին կատարել իրավաչափ եզրահանգում,

6) որո՞նք են 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված այն պահանջները, որոնց վերաբերյալ քաղաքացիական գործում փաստերի առկայությունը կարող է միայն թույլ տալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին կատարել իրավաչափ եզրահանգում:

Դիրքորոշումներ 1-ին հարցադրման վերաբերյալ.

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Նախկին օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում (այսուհետ՝ դատարաններ) քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Այլ օրենքներում (բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն նույն օրենսգրքին:

Նախկին օրենսգրքի՝ «Առարկայական ընդդատությունն ընդհանուր իրավասության դատարանին» վերտառությամբ 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախկին օրենսգրքի՝ «Տարածքային ընդդատությունը» վերտառությամբ 12-րդ գլխի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը՝ ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝

1) եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ.

2) (…)

3) գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպքերում:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ Նախկին օրենսգրքի գործողության ժամանակահատվածում ՀՀ դատարաններում քաղաքացիական գործերով

դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Ընդ որում, այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեին Նախկին օրենսգրքին: Միակ բացառությունն այս կանոնից նախատեսված է սնանկության վարույթը կարգավորող օրենքների համար:

Նախկին օրենսգիրքը, կարգավորելով քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա գործերի շրջանակը, քաղաքացիաիրավական բնույթի բոլոր վեճերի ընդդատությունը վերապահել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Ընդ որում, Նախկին օրենսգիրքը, գործածելով «առարկայական ընդդատություն» և «տարածքային ընդդատություն» եզրույթները, սահմանափակվել է առարկայական ընդդատության վերաբերյալ միայն նույն օրենսգրքի 15-րդ հոդվածի կարգավորմամբ: Նշվածով հանդերձ՝ Նախկին օրենսգրքում առանձին գլխով առավել հանգամանալից կարգավորված են տարածքային ընդդատության կանոնները: Մասնավորապես, օրենսդիրը ոչ միայն սահմանել էր այդ կանոններից յուրաքանչյուրին առաջադրվող պայմանները, այլև նախատեսել էր որոշակի հետևանքներ այդ կանոնների խախտմամբ հայցադիմումը վարույթ ընդունելու պարագայում՝ նման իրավիճակում Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով իմպերատիվ կերպով պարտավորեցնելով դատարանին գործը հանձնել այլ դատարանի քննությանը, եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ: Միաժամանակ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում օրենսդիրը սահմանել էր, որ ***դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝ գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպքերում*** առանց բացահայտելու նման դեպքերի հնարավոր շրջանակը կամ սահմանելու այդպիսի լիազորության կիրառման համար անհրաժեշտ՝ ուղղորդող պայման (պայմաններ), ինչպես դա առկա է նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում:

Վերոգրյալն ուղղակիորեն փաստում է նշված իրավակարգավորման անորոշությունը և իրավակիրառման գործընթացում խնդրահարույց բնույթը: Նշված նկատառումով, ելնելով քննարկվող իրավակարգավորման մեջ պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից՝ հարկ է նշել, որ օրենսդիրն այս դեպքում, որպես միակ ուղղորդող չափանիշ, սահմանել է ***գործը հարուցված դատարանում քննելու անհնարինությունը***: Այս կապակցությամբ կարևորվում է հետևյալ հարցադրման պարզաբանումը. արդյո՞ք այդ անհնարինությունը բացառապես պետք է պայմանավորված լինի տարածքային ընդդատության որևէ կանոնի կիրառելիությամբ, թե նման անհնարինություն կարող է ծագել նաև առարկայական ընդդատության կանոնի կիրառման կամ դրա փոփոխության արդյունքում:

Համակարգային մեկնաբանության ենթարկելով Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի և նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իրավադրույթները՝ պետք է նշել, որ օրենսդիրը հստակ կարգավորել է տարածքային ընդդատության կանոնի խախտմամբ վարույթ ընդունված և գործի քննության ընթացքում տարածքային ընդդատության փոփոխության դեպքերը՝ առաջին դեպքում նախատեսելով գործը հանձնելու դատարանի իմպերատիվ լիազորություն, իսկ երկրորդ դեպքում պարտավորեցնելով շարունակել գործի քննությունն այն հարուցված դատարանում: Հետևաբար կարելի է փաստել, որ Նախկին օրենսգիրքը սպառիչ կերպով կարգավորել է տարածքային ընդդատության կանոններով պայմանավորված գործերի հանձնման կամ հետագա քննության հարցը և նույն օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով

նախատեսված իրավիճակը որևէ կերպ չի կարող ենթադրել տարածքային ընդդատության կանոնի խախտման կամ փոփոխության հիմքով գործը հանձնելու իրավական հնարավորությունը: Ինչպես արդեն իսկ նշվեց, թեև օրենսդիրը չի բացահայտել Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հնարավոր իրավիճակները, սակայն դատական պրակտիկայում այդպիսին կարող են դիտարկվել այն դեպքերը, երբ գործը տվյալ դատարանում քննելու անհնարինությունը պայմանավորված է տվյալ դատարանի՝ գործը քննելու իրավասություն ունեցող բոլոր դատավորների կողմից ինքնաբացարկ հայտնելու փաստով կամ վերադաս դատարանի կողմից դատական ակտի բեկանման դեպքում տվյալ դատարանի բոլոր դատավորների՝ գործի քննությանը մասնակցություն ունենալու հանգամանքով: Ընդ որում, վկայակոչված երկու դեպքում էլ օբյեկտիվորեն առկա է գործը տվյալ դատարանում քննելու անհնարինություն, այդ անհնարինությունը որևէ կերպ պայմանավորված չէ ընդդատության կանոնի խախտմամբ կամ փոփոխությամբ: Ընդհակառակը, նման անհնարինությամբ պայմանավորված՝ գործն այլ դատարան ուղարկելու արդյունքում տեղի է ունենում տարածքային ընդդատության այնպիսի փոփոխություն, որը փաստորեն չի համապատասխանում տվյալ գործի տարածքային ընդդատության վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանած ընդհանուր կամ հատուկ կանոնին:Վերոգրյալից հետևում է, որ Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի վկայակոչմամբ գործն այլ դատարան ուղարկելու հիմքը որևէ աղերս չէր կարող (չի կարող) ունենալ տարածքային ընդդատության կանոնների հետ՝ անկախ այն հանգամանքից, որ օրենսդրական շարադրանքի պայմաններում տեղ է գտել Նախկին օրենսգրքի «Տարածքային ընդդատությունը» վերտառությամբ գլխում: Նման պայմաններում քննարկելով այն հարցը, թե արդյոք այն կարող է վերաբերել առարկայական ընդդատության կանոնին՝ պետք է արձանագրել հետևյալը.

Նախկին օրենսգիրքը նախատեսում էր, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական դատավարության կարգը սահմանվում է նաև այլ օրենքներով: Որպես այլ՝ այդպիսի օրենք՝ կիրառման ենթակա է(էր) «Սնանկության մասին» օրենքը, ընդ որում՝ նշված օրենքում պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը կարող էին չհամապատասխանել Նախկին օրենսգրքի դրույթներին:

«Սնանկության մասին» օրենքում 17.06.2016թ. ընդունված և 23.07.2016թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-105-Ն օրենքով կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում «Սնանկության գործերի առարկայական ընդդատությունը» վերտառությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «Սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»: Ընդ որում, նշված փոփոխությունը և լրացումը նախատեսող օրենքի նախագծի ընդունման հիմնավորումներում, որպես այդպիսի փոփոխության անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկ, նշված է. «Գործնականում հաճախ է հանդիպում, երբ պարտապանին վերաբերող վեճերը քննվում են տարբեր դատարաններում, օրինակ, երբ պարտապանը վիճարկում է գործարքների անվավերությունը, գույքային պահանջներ է ներկայացնում և այլն: Նման դեպքերում սնանկության գործը մնում է առկախված: Պարտապանին վերաբերող բոլոր քաղաքացիական գործերը մեկ վարույթում քննելը կարող է այն ավելի արդյունավետ

դարձնել»[1]: Շարադրվածից հետևում է, որ օրենսդրական այս փոփոխության նախաձեռնման և իրականացման նպատակը պարտապանին վերաբերող քաղաքացիական գործերը մեկ վարույթում կենտրոնացնելն է, որը պետք է ապահովի արդարադատության արդյունավետությունը: Փաստորեն, քննարկվող կարգավորմամբ սահմանվել է առարկայական ընդդատության՝ Նախկին օրենսգրքի կարգավորումը լրացնող նոր կարգավորում, որը նախատեսում է, որ որոշակի քաղաքացիական գործեր ենթակա են քննության սնանկության գործի շրջանակում: Ընդ որում, եթե նոր հարուցվելիք գործերի պարագայում արդեն իսկ կանխորոշված էր դրանց առարկայական ընդդատությունը, ապա արդեն իսկ հարուցված գործերի պարագայում նոր կանոնի կիրառելիությունը պարզաբանման անհրաժեշտություն ունի: Մասնավորապես, վերջին դեպքում ստացվում է, որ դատարանի վարույթում առկա է Նախկին օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանող քաղաքացիական գործ, որը միաժամանակ համապատասխանում է «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-105-Ն օրենքով սահմանված՝ առարկայական ընդդատության չափանիշներին: Այլ կերպ ասած՝ առաջանում է տվյալ գործը սնանկության վարույթից դուրս քննելու օբյեկտիվ անհնարինություն, որն էլ կարող է որակվել որպես Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «**գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպք»:** Հետևաբար կարելի է արձանագրել, որ Նախկին օրենսգրքի գործողության շրջանակներում հարուցված և քննվող այն քաղաքացիական գործերը, որոնք «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-105-Ն օրենքի ուժով ենթակա են քննության սնանկության վարույթում, Նախկին օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հիմքով կարող են հանձվել սնանկության գործը քննող դատարանին, տվյալ պարագայում՝ Սնանկության դատարանին:

Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ.

09.02.2018թ. ընդունված և 09.04.2018թ. ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Գործող օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգիրքը սահմանում է **Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (այսուհետ՝ առաջին ատյանի դատարան),** Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանում (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) քաղաքացիական գործերով դատավարության իրականացման կարգը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են **Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան)** սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Գործող օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

[1] http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8199&Reading=0

Գործող օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի՝ մինչև 21.11.2019թ. խմբագրությամբ գործող 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև ***վարչական դատարանի կողմից*** վերահասցեագրված գործի նկատմամբ:

Նույն հոդվածի՝ 21.11.2019թ. խմբագրությամբ գործող 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև ***վարչական կամ սնանկության դատարանի*** կողմից համապատասխանաբար վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ:

Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ **առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերը առաջին ատյանի դատարանում** քննվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով:

Ի տարբերություն Նախկին օրենսգրքի՝ 09.02.2018 թվականին ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության համակարգ ներդրվեց նաև նոր գործիքակազմ, այն է՝ գործի հարուցման կամ քննության փուլերում տվյալ գործի ընդդատության կամ ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու իրավական ընթացակարգ՝ նման լիազորություն վերապահելով Վճռաբեկ դատարանի նախագահին: Ընդ որում, եթե մինչև 21.11.2019թ. խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հնարավորություն չէր տալիս լուծելու քաղաքացիական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանների և Սնանկության դատարանի միջև ծագած՝ գործի ենթակայության վերաբերյալ վեճը, ապա 21.11.2019թ. խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը Վճռաբեկ դատարանի նախագահին օժտել է նաև նշված ենթակայության վեճը լուծելու իրավասությամբ՝ համապատասխանաբար գործի ենթակայության վերաբերյալ անհամաձայնություն ունենալու դեպքում նման հարցով գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու լիազորություն վերապահելով նաև գործը ստացած Սնանկության դատարանին:

Նկատի ունենալով, որ Սնանկության դատարանի՝ գործի ենթակայության շուրջ ծագած վեճով Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու և նման վեճը լուծելու Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորության առկայության հարցը կարող է որոշակիորեն խնդրահարույց համարվել Նախկին օրենսգրքի գործողության ժամանակահատվածում հարուցված և քննվող գործերի պարագայում՝ Նախկին օրենսգրքում համապատասխան լիազորությունների և ընթացակարգերի բացակայության հիմքով, հարկ է անդրադառնալ և պարզաբանել հետևյալ հարցադրումը.

արդյո՞ք այն դեպքում, երբ Նախկին օրենսգրքի գործողության ժամանակահատվածում հարուցված և Նախկին օրենսգրքի կանոններով քննվող գործը հանձնվել է Սնանկության դատարանին, և Սնանկության դատարանն անհամաձայնություն ունի գործի ենթակայության վերաբերյալ, Սնանկության դատարանը պե՞տք է ղեկավարվի Նախկին օրենսգրքով, որը ենթակայության վեճի լուծման ընթացակարգ և ըստ այդմ՝ համապատասխան լիազորություններ չի նախատեսում, թե նոր՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի կանոնով, որը սահմանում է, որ գործն ըստ ենթակայության ստացած դատարանը

*յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի **ենթակայությանը**:*

Ընդ որում, նշված խնդիրը հարկ է դիտարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում 21.11.2019թ. ուժի մեջ մտած լրացման համատեքստում՝ համակարգային վերլուծության ենթարկելով Գործող օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և նույն օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասը:

Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծությունից ուղղակիորեն հետևում է, որ Նախկին օրենսգրքի դրույթները կիրառելի են միայն 09.02.2018թ. ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ **առաջին ատյանի դատարանի** վարույթում գտնվող և **առաջին ատյանի դատարանում** քննվող գործերի նկատմամբ, որպիսին Գործող օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասը դիտարկում է միայն ***Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին***: Նույն հոդվածի 2-րդ մասում տարբերակված կերպով գործածելով **«Սնանկության դատարան»** եզրույթը՝ օրենսդիրը որևէ կերպ այն չի ներառել նույն օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորման մեջ, ինչից հետևում է, որ Նախկին օրենսգրքով գործի քննությունն իրականացնելու պայմանը հասցեագրված է ***միայն Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին***: Ավելին, Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասը գործածում է նաև **«վարույթում գտնվող»** արտահայտությունը, որպիսի իրավիճակը բացառվում է այն դեպքում, երբ Սնանկության դատարանին Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից գործ է փոխանցվում: Նման իրավիճակում գործը դեռևս չի գտնվում Սնանկության դատարանի վարույթում, հետևաբար Գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումն այդպիսի իրավիճակում կիրառելի չէ: Միաժամանակ նկատի ունենալով Գործող օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, որը նախատեսում է, որ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են **Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան)** սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, Սնանկության դատարանը փոխանցված քաղաքացիական գործի ընդունելության հարցը լուծելիս, հիմք ընդունելով Գործող օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի իրավանորմը, իրավասու է ծագած ենթակայության վեճը լուծելու համար գործն ուղարկել Վճռաբեկ դատարանի նախագահին: Վճռաբեկ դատարանի նախագահն էլ վերը շարադրված պատճառաբանությունների հիմքով իրավասու է Գործող օրենսգրքի 26-րդ հոդվածի կիրառմամբ լուծելու իրեն հասցեագրված ենթակայության վեճը:

Դիրքորոշումներ 3-րդ հարցադրման վերաբերյալ.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ «պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ կարճվում կամ ավարտվում են պարտապանից ***գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով*** քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով»:

Նույն կարգավորումն առկա է նաև 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում:

15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի համաձայն՝ «(...) դատարանը պարտապանին սնանկ ճանաչելու, դիմումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին անհապաղ տեղեկացնում է՝

(...),

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար,

(...)»:

Նույն կարգավորումն առկա է նաև մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենգիրք) 182-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի կետի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝

(...),

օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

09.04.2018թ. ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Դատարանը կարճում է գործի վարույթը, եթե՝ վեճը ենթակա չէ դատարանում քննության»:

Օրենսգրքի 439-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«Սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգիրքը:

Մինչև սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների, դիմումների և բողոքների վարույթ ընդունելու հարցը լուծելիս կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերը:

Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերն առաջին ատյանի դատարանում քննվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով»:

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում քննվող քաղաքացիական գործերով պատասխանողների սնանկ ճանաչված լինելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանից ծանուցում ստանալու կամ Օրենսգրքով թույլատրելի ցանկացած այլ աղբյուրից տեղեկատվություն ստանալու դեպքում առաջին հերթին իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերով պետք է քննարկման առարկա դարձնեն գործի վարույթը՝ «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով

սահմանված կարճելու հիմքի առկայության հարցը: Միաժամանակ հարկ է նշել, որ տվյալ հիմքի առկայության դեպքում քաղաքացիական գործի վարույթը կարճելու իրավական հնարավորություններն առկա են ինչպես 09.04.2018թ. ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետում, այնպես էլ՝ Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում:

«Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի բովանդակության ուսումնասիրությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող այն քաղաքացիական գործի վարույթն է ենթակա կարճման, որով հայցվորի կողմից պատասխանողին ուղղված է ***գումարի բռնագանձման պահանջ կամ գույք հանձնելու պահանջ:*** Հետևաբար «Սնանկության մասին» օրենքի վկայակոչված հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու անհրաժեշտություն կարող է ծագել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) քաղաքացիական գործով պատասխանողը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով սնանկ է ճանաչվել,

բ) քաղաքացիական գործով սնանկ ճանաչված պատասխանողի դեմ ներկայացված է գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գումարի բռնագանձման պահանջի դեպքում առավել քան հստակ է դատական գործերի շրջանակը, իսկ գույք հանձնելու պահանջի մասով իրավակիրառ պրակտիկայում հնարավոր է առաջանան որոշակի տարընկալումներ, ինչպես նաև նկատի ունենալով դատական գործերը մեկ դատարանից մեկ այլ դատարան անհարկի հանձնելը, գործերի քննության անհարկի ձգձգումները կանխելու կարևորությունն ու անհրաժեշտությունը, և այդ հանգամանքների հնարավոր ազդեցությունը գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի ապահովման գործընթացի վրա՝ գտնում եմ, որ հարկ է վերլուծել «Սնանկության մասին» օրենքի վերը նշված հոդվածի իմաստով «գույք հանձնել» եզրույթի հասկացությունը:

Պարտապանի գույքի կազմում ներառման ենթակա գույքի շրջանակը հստակ սահմանված է մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ կարգավորումը որոշակի փոփոխությունների է ենթարկվել 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքով: Մասնավորապես՝ մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ: Ի ապահովումն պարտապանի՝ սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած ապահովված իրավունքով պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար ապահովված իրավունքի առարկան (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող) չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում են ընդգրկվում սույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում»:

15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ կամ այլ գույքային իրավունքներ, ինչպես նաև երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկաները: Ապահովված իրավունքի այն առարկան (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող), որի վերաբերյալ դատարանը սույն օրենքի 39.2-րդ հոդվածով սահմանված կարգով ընդունել է ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացում թույլատրելու մասին որոշում, չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում ընդգրկվում են սույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում»:

Հետևաբար, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ թեպետ 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում ընդլայնվել է պարտապանի գույքի կազմում ներառման ենթակա գույքի կազմի շրջանակը, այդ թվում՝ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկաների ներառման ենթակա լինելու առումով, այդուհանդերձ, հարկ է նկատի ունենալ, որ ինչպես մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի, այնպես էլ՝ 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը վերաբերում է պատասխանողին պատկանող գույքին:

Այս մեկնաբանությունն առավել ամրապնդվում է «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով (ներկայումս գործող խմբագրությամբ) սահմանված այն լրացուցիչ պահանջով, որ հարուցված քաղաքացիական գործն իր ազդեցությունը պետք է ունենա սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ վերը նշված իրավակարգավորումների բովանդակային վերլուծությունից հետևում է, որ «գույք հանձնել» եզրույթը վերաբերում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակության մեջ բացահայտված գույքին, այլ ոչ թե պարտապանի մոտ գտնվող ցանկացած գույքին:

Դիրքորոշումներ 4-րդ հարցադրման վերաբերյալ.

«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) թիվ ՀՕ-294-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված սնանկության գործերը

վարվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերով»:

«Սնանկության մասին» օրենքի՝ սնանկության գործերի քննության կարգը սահմանող 1-ին հոդվածի համաձայն՝

«1. Սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով:

2. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Օրենսգրքի գործողության ոլորտը սահմանող 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

«սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործի քննության կամ առանձին դատավարական գործողության կատարման ժամանակ գործող օրենքով»:

Վերոգրյալ իրավակարգավորումները վերլուծելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորման լույսի ներքո՝ կարելի է հստակորեն արձանագրել, որ Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքով մեծածավալ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Սնանկության մասին» օրենքում, և Օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող հոդվածով տրվել են այն անհրաժեշտ իրավական լուծումները, որոնք հնարավորություն են տալիս տարանջատել մինչև Օրենքի ընդունումը հարուցված և Օրենքի ընդունումից հետո հարուցված սնանկության վարույթների նկատմամբ հետագա կիրառելի իրավակարգավորումների շրջանակը: Այսինքն՝ հստակ ընդգծվել է այն սահմանագիծը, թե սնանկության գործերի որ խմբի նկատմամբ է գործում 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները (այդ թվում՝ 4-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով), և սնանկության գործերի որ խմբի նկատմամբ է շարունակում գործել մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները (այդ թվում՝ 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով):

Վերոգրյալ իրավական վերլուծության արդյունքում հստակ է այն, որ մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը հարուցված սնանկության գործերի վարման գործընթացում կիրառելի չէ 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի իրավակարգավորումները: Հետևաբար, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները քաղաքացիական գործերը 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Սնանկության

դատարան ըստ ենթակայության ուղարկելիս, ի թիվս այլ հանգամանքների, պետք է պարզեն Սնանկության դատարանում վարվող սնանկության գործը հարուցվել է մինչև 15.04.2020 թվականը (օրենքի ուժի մեջ մտնելը), թե հարուցվել է 15.04.2020 թվականից հետո: Սա է այն սահմանագիծը, որ առաջին ատյանի դատարանները պետք է նկատի ունենան կիրառելի իրավունքի նորմերն ընտրելու գործընթացում:

Միաժամանակ հարկ է նշել, որ ի թիվս 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի մյուս կարգավորումների, նույն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 10-րդ մասը կիրառելիս պետք է այն դիտարկել համակարգային, այն է՝ նույն հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման լույսի ներքո և շրջանակներում:

Մինչև 15.04.2020 թվականը հարուցված սնանկության գործերի վարման գործընթացում 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումները կիրառելը, այդ թվում՝ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման իմաստով, ուղղակի կհակասի նույն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորմանը:

Դիրքորոշումներ 5-րդ հարցադրման վերաբերյալ.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերը **մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով** սահմանված իրավակարգավորման հիման վրա կարող են ըստ ենթակայության ուղարկել Սնանկության դատարան հետևյալ հանգամանքների հաշվառմամբ և պարզմամբ.

1) պետք է բացառված լինի քաղաքացիական գործի վարույթը «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորությունը,

2) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ,

3) սնանկության գործով պարտապանը պետք է հանդիսանա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիաիրավական վեճով պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանելով մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ

«Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը՝ կարելի է փաստել, որ միայն վերը նշված երեք պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր արձանագրել, որ գործն ըստ ենթակայության ուղարկած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի հետագա քննություն:

Դիրքորոշումներ 6-րդ հարցադրման վերաբերյալ.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը սահմանելիս Օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովել սնանկության գործընթացի արդյունավետությունը, այդ թվում՝ ապահովել սնանկության գործի վարման ամբողջականությունը, գործով բացահայտել հնարավոր բոլոր պարտատերերին և նրանց պահանջները, սնանկության վարույթով անցնող ցանկացած գույքի վերաբերյալ հարցի քննարկում կազմակերպել միայն սնանկության վարույթում, ինչը կապահովի սնանկության վարույթի արդյունավետությունը և սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների ամբողջական իրացումը, քաղաքացիական և սնանկության գործերի ողջամիտ ժամկետում քննությունը, բացառելով հանդերձ նույն գույքի կամ իրավունքի վերաբերյալ տարբեր դատարաններում քննվող գործերի, ինչպես նաև դատական ակտերի առկայությունը և այլն:

Օրենսդրի այս կամքն իր ցայտուն արտահայտումն է ստացել տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններում, որպիսի իրավիճակում ուշադրության է արժանի «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից ընդունված 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքը (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.):

Այսպես. 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նոր խմբագրությամբ 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր):

Նշված նոր իրավակարգավորման բովանդակության բացահայտման արդյունքում կարելի է արձանագրել, որ օրենսդրի սահմանած նոր իրավակարգավորումն ենթադրում է քաղաքացիական գործերի առավել լայն շրջանակի քննություն սնանկության վարույթի շրջանակում, մասնավորապես՝ այն քաղաքացիական գործերը, որոնք կապված են սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ

մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերի հետ (բացառությամբ սնանկության գործերով կառավարչների կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի):

Այդուհանդերձ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենսդիրը սահմանել է նաև 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման շրջանակներում Սնանկության դատարանի կողմից քննության ենթակա (այդ թվում՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից ըստ ենթակայության ստացված) գործերի շրջանակը որոշելու համար անհրաժեշտ իրավակարգավորումները, որոնց վերաբերյալ իրավական վերլուծությունները մանրամասնորեն շարադրված են «Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ» հատվածում: Այսինքն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված քաղաքացիական գործերի փաստական հանգամանքների՝ 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմանը համապատասխանելն ինքնին բավարար չէ քաղաքացիական գործն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին եզրահանգում կատարելու համար:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերը **15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով** սահմանված իրավակարգավորման հիման վրա կարող են ըստ ենթակայության ուղարկել Սնանկության դատարան հետևյալ հանգամանքների հաշվառմամբ և պարզմամբ.

1) պետք է բացառված լինի քաղաքացիական գործի վարույթը «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորությունը,

2) սնանկության գործը պետք է հարուցված լինի «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից ընդունված 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո,

3) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի,

4) քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա Սնանկության դատարանում հարուցված և վարվող սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանելով 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝

12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անհրաժեշտ է փաստել, որ միայն վերը նշված չորս պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր արձանագրել, որ գործն ըստ ենթակայության ուղարկած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի հետագա քննություն:

Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Դատարանի 10.06.2020թ. որոշմամբ վարույթ է ընդունվել թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործը (հայցադիմումը դատարան է ներկայացվել 03.02.2015թ.-ին), որի շրջանակներում քննվում է Աղվան Մկոյանի հայցն ընդդեմ «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի, «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի, «Արցախբանկ» ՓԲԸ-ի, «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի, «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ-ի, Կամո Ներսիսյանի, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի, երրորդ անձինք «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Արման Սարգսյանի, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, «Ագրո-Պետրոլ Սերվիս» ՍՊԸ-ի, «Ագրո-Պետրոլ Սերվիս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Իզաբելլա Ցամաքյանի, Լևոն Ամիրխանյանի, Կենտրոն նոտարական տարածքի նոտարներ Քրիստինե Արսենյանի, Աշխեն Հարությունյանի, Էլմիրա Դանիելյանի, Նունե Սարգսյանի, Նոտարական պալատի՝ գործարքների և դրանց մասերի առոչնչության հետևանքներ կիրառելու և հայցվորի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին:

10.06.2020թ.Դատարանը որոշում է կայացրել գործն ըստ ենթակայության Սնանկության դատարան ուղարկելու մասին: Քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը ենթակա լինելու Դատարանի եզրահանգումը հիմնավորվել է 15.04.2020թ.-ից գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի համապատասխան դրույթի վկայակոչմամբ և կիրառմամբ: Մասնավորապես, Դատարանը, արձանագրելով, որ «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ն դատարանի վճռով սնանկ է ճանաչվել, և սույն քաղաքացիական գործով ներկայացված պահանջները սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճ է, եզրահանգել է, որ սույն քաղաքացիական գործով առկա են 15.04.2020թ.-ից գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերը, ուստիև սույն քաղաքացիական գործը պետք է հանձնել Սնանկության դատարանի քննությանը:

Սնանկության դատարանը թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործի ենթակայության հարցը քննարկել է մինչև 15.04.2020թ. գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի իրավակարգավորումների համատեքստում և իր անհամաձայնությունը հիմնավորել է՝ փաստարկելով, որ 30.12.2014 թվականի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքում բացակայում է սնանկության գործը քննող դատավորի կողմից սնանկության վարույթին որևէ կերպ առնչվող առանձին քաղաքացիական գործեր քննելու կարգը սահմանող որևէ դրույթ: Նման իրավակարգավորում «Սնանկության մասին» օրենքում ներմուծվել է միայն «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 17.06.2016թ. ընդունված թիվ ՀՕ-105-Ն օրենքով, որի իրավակարգավորումները

տարածվում են այդ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, մինչդեռ սույն դեպքում թիվ ԵԱՔԴ/0151/04/14 սնանկության գործով ներկայացված դիմումը վարույթ է ընդունվել 30.12.2014 թվականին:

Հարկ է նախ և առաջ արձանագրել, որ համաձայն www.datalex.am դատական տեղեկատվական համակարգի տվյալների՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 30.12.2014թ. թիվ ԵԱՔԴ/0151/04/14 որոշմամբ վարույթ է ընդունվել «Մուլտիկոնտիննենտալ Դիսթրիբյուշեն Լիմիթիդ» ընկերության դիմումը՝ «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին: Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.02.2015թ. վճռով «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ թիվ ԵԿԴ/0322/02/15 գործը հարուցվել է և նշված գործի քննությունը Դատարանում շարունակվել է Նախկին օրենսգրքով սահմանված կարգով, հետևաբար սույն որոշման «***Դիրքորոշումներ 1-ին հարցադրման վերաբերյալ»*** կետում արտահայտված իրավական վերլուծությունների հիմքով առկա էր նշված գործը սնանկության հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ նախատեսված պայմանների առկայության պարագայում Սնանկության դատարան փոխանցելու իրավական հնարավորություն, և այս կապակցությամբ Սնանկության դատարանի փաստարկները չեն բխում սույն որոշման մեջ շարադրված իրավական վերլուծություններից:

Վերոգրյալով հանդերձ՝ նկատի ունենալով, որ թիվ ԵԿԴ/0322/02/15 գործը ստացած Սնանկության դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել գործի ենթակայության վերաբերյալ և այն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին, հարկ է նաև արձանագրել, որ սույն որոշման «***Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ»*** կետում արտահայտված իրավական վերլուծությունների հիմքով առկա է նաև Սնանկության դատարանի՝ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու և գործի ենթակայության վերաբերյալ վեճը Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից լուծելու իրավական հնարավորությունը:

Նման պայմաններում սույն որոշման «***Դիրքորոշումներ 3-6-րդ հարցադրումների վերաբերյալ»*** կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով գործի փաստական հանգամանքներին՝ գտնում եմ, որ դատարանների միջև ծագած ենթակայության վեճը լուծելու համար հարկ է պարզել հետևյալ հանգամանքները՝

ա) արդյո՞ք բացառված է թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործի վարույթը «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորությունը,

բ) թիվ ԵԿԴ/0322/02/15 գործի ենթակայության հարցը լուծելիս արդյո՞ք կիրառման ենթակա է մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը, թե 15.04.2020թ. ուժի մեջ մտած՝ 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումը,

գ) կիրառելի իրավակարգավորման շրջանակներում առկա են արդյո՞ք թիվ ԵԿԴ/5513/02/14 գործը Սնանկության դատարանին հանձնելու համար անհրաժեշտ նախապայմանները:

Թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործով ներկայացված հայցապահանջների ուսումնասիրությունից հետևում է, որ թեև սնանկ ճանաչված «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ն հանդես է գալիս որպես պատասխանող, սակայն վերջինիցս գումարի բռնագանձման կամ նրան պատկանող գույք հանձնելու պահանջ ներկայացված չէ: Մասնավորապես, թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործով քննության են առնվում վեճի առարկա անշարժ գույքի կապակցությամբ կնքված գործարքների և դրանց մասերի առոչնչության հետևանքներ կիրառելու և վեճի առարկա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ պահանջներ, մինչդեռ ինչպես հետևում է «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կարգավորումից, նշված իրավանորմի հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու պարտադիր պայման է այն, որ սնանկ ճանաչված պատասխանողի դեմ ուղղակիորեն ներկայացված լինի գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջ: Հետևաբար բացառվում է «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործի վարույթը կարճելու իրավական հնարավորությունը:

Անդրադառնալով սույն գործի ենթակայության հարցը լուծելիս կիրառման ենթակա օրենսդրության հարցին՝ հարկ է նշել, որ «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի սնանկության գործը հարուցվել է **30.12.2014թ.,** այսինքն՝ մինչև 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը (15.04.2020թ.), որպիսի պարագայում սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում կիրառման ենթակա են մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները՝ հաշվի առնելով, որ 12.12.2019թ. ընդունված (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) թիվ ՀՕ-294-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասը, որպես կիրառելի օրենսդրությունը որոշելու ուղենիշ, սահմանել է գործի հարուցման պահը: Նման պայմաններում իրավաչափ է մինչև 15.04.2020թ. գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումների կիրառելության վերաբերյալ Սնանկության դատարանի եզրահանգումը, ինչը, սակայն, անտեսվել է Դատարանի կողմից: Հետևաբար թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործի՝ Սնանկության դատարանին ենթակայության հարցը պետք է պարզել և գնահատել մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների լույսի ներքո:

Անդրադառնալով թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործով հայցադիմումով ներկայացված պահանջների բնույթին՝ նախ հարկ է նշել, որ «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ն թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործով հանդես է գալիս որպես պատասխանող:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործով վեճն առնչվում է թիվ ԵԱՔԴ/0151/04/14 սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքին և իրավունքներին (մասնավորապես՝ գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտի արդյունքում հնարավոր է տեղի ունենա սնանկ ճանաչված պարտապանի գույքային իրավունքների փոփոխություն՝ հնարավոր գույքային միավորների արտահոսքի կամ ներհոսքի եղանակով): Այսպես՝ սույն գործով վեճի առարկա են հանդիսանում հետևյալ գույքային միավորները՝ ***ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 22, թիվ 60, թիվ 62, թիվ 63, թիվ 64 հասցեների բնակարանները,***

ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 82/4, թիվ 82/7 հասցեների տարածքները, ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, -3 հարկում /-10.2 նիշ/ գտնվող թվով վեց հատ ավտոմեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղիները: Գործում առկա՝ անշարժ գույքի գրավի պայմանագրերով հիմնավորվում է ***ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 22, թիվ 60, թիվ 62, թիվ 64 հասցեների բնակարանների, ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 82/4, թիվ 82/7 հասցեների տարածքների***՝ սնանկ ճանաչված պարտապան «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ին պատկանելիության փաստը: Սնանկության դատարանը, սակայն, չի վկայակոչել որևէ փաստարկ կամ հղում չի կատարել որևէ ապացույցի, որը հաստատում է նշված գույքը թիվ ԵԱՔԴ/0151/04/14 սնանկության գործով պարտապանի գույքային զանգվածի մեջ ներառված չլինելու հանգամանքը: Հետևաբար, նկատի ունենալով, որ թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործում առկա ապացույցներով ուղղակիորեն հիմնավորվում է վեճի առարկա՝ ***ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 22, թիվ 60, թիվ 62, թիվ 64 հասցեների բնակարանների, ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, թիվ 82/4, թիվ 82/7 հասցեների տարածքների***՝ սնանկ ճանաչված «ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ» ՍՊԸ-ին պատկանելիության փաստը, ինչը «Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նշված գույքը պարտապանի գույքի կազմում ներառելու հիմք է, միաժամանակ հաշվի առնելով, որ գործում առկա չէ հակառակ փաստը հիմնավորող որևէ ապացույց, ապա պետք է փաստել, որ թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործով ծագած վեճը՝ այդ գույքային միավորների մասով, առնչվում է թիվ ԵԱՔԴ/0151/04/14 սնանկության գործով պարտապանի գույքային իրավունքներին:

Ինչ վերաբերում է վեճի առարկա՝ **ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շ., թիվ 63 հասցեի բնակարանին**, ապա գործում առկա ապացույցով հիմնավորվում է, որ նշված հասցեի անշարժ գույքն օտարվել է այլ անձի՝ Կամո Ներսիսյանին: Հետևաբար նշված բնակարանը չէր կարող ներառված լինել թիվ ԵԱՔԴ/0151/04/14 սնանկության գործով պարտապանի գույքային զանգվածի մեջ:

Գործում առկա չէ որևէ ապացույց կամ ներկայացված չէ որևէ հիմնավորում ***ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, -3 հարկում /-10.2 նիշ/ գտնվող թվով վեց հատ ավտոմեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղիների***՝ թիվ ԵԱՔԴ/0151/04/14 սնանկության գործով պարտապանի գույքային զանգվածի մեջ ներառված լինելու վերաբերյալ: Այդ կապակցությամբ եզրահանգում չի ներկայացրել նաև Սնանկության դատարանը:

Փաստորեն՝ սույն գործով ներկայացված հայցապահանջները, բացառությամբ՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շ., թիվ 63 հասցեի բնակարանի և ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շենք, -3 հարկում /-10.2 նիշ/ գտնվող թվով վեց հատ ավտոմեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղիների կապակցությամբ ներկայացված հայցապահանջների, համապատասխանում են մինչև 15.04.2020 թվականը (մինչև 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գործն ըստ ենթակայության Սնանկության դատարան ուղարկելու համար անհրաժեշտ պայմաններին: Հետևաբար, անկախ այն հանգամանքից, որ սույն գործով ներկայացված՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40 շ., թիվ 63 հասցեի բնակարանի կապակցությամբ ներկայացված հայցապահանջների պարագայում բացակայում է գործը Սնանկության դատարանին հանձնելու հիմքը, այդուհանդերձ, վերոթվարկյալ պահանջների մեկ միասնական՝ թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում քննության

հանգամանքը պայմանավորում է նշված գործի՝ ամբողջությամբ Սնանկության դատարանին ենթակայությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործը ենթակա է Սնանկության դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԵԿԴ/0322/02/15 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Սնանկության դատարան:

3. Որոշման օրինակն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ